

ՍԵՐԳԵՅ ԶՈՀԱՐՅԱՆ
**ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի
ասխատեմու, իրավ. գիտ. քննկածու**

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

Իրավաբանական գործունեությունը, այսինքն՝ հատուկ իրավական գիտելիքների կիրառման հետ կապված գործունեությունը բազմակողմանի աշխատանք է, որը կատարվում է կյանքի բոլոր բնագավառներում: Այդ գործունեության մեջ իրավաբանական տեխնիկան կարևորագույն միջոց է իրավաբանական սխալներն ուղղելու և կանխարգելու համար: Ցանկացած իրավաբանական աշխատանքը առանձնանում է բարդությամբ: Այդ պատճառով նրան, որպես կանոն, հատուկ է փայլունությունը, հետևողականությունն առանձին գործողություններ իրականացնելիս: Դրանց կատարման ընթացքի խաթարումը հղի է բացասական լուրջ հետևանքներով: Այսպիսով, իրավաբանական տեխնիկայի իմացությունը հնարավորություն է տալիս բարձրացնելու իրավաբանական աշխատանքի որակը:

Իրավաբանական գիտության մեջ արդեն ամուր արմատավորվել է այն կարծիքը, որ իրավաբանական տեխնիկան կանոնների, հնարքների և եղանակների ամբողջությունն է¹: Այն որոշակի չափանիշներով ենթարկվում է դասակարգման: Գոյություն ունեն տարբեր կարծիքներ, թե իրավաբանական տեխնիկայի քանի և ինչպիսի տեսակներ կարելի են առանձնացնել: Ω.-S. Մոլիսալը, օրինակ, կախված նորմատիվ իրավական ակտերի իրավաբանական ուժից և նշանակությունից, առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի երեք տեսակ՝ ա) օրենսդրական (իրա-

¹ Տե՛ս, օրինակ, **Աէանդան Ն.Ն.** Ի անձակագործության մեջ՝ օրենսդրական տեխնիկայի կանոնների համապատասխան պահպանական աշխատանքը, 2009. - էջ 482, Ի անձակագործության մեջ՝ օրենսդրական տեխնիկայի կանոնների համապատասխան պահպանական աշխատանքը, 2004. - էջ 300, **Աանդան Ա.Ա.** Օրենսդրական տեխնիկայի կանոնների համապատասխան պահպանական աշխատանքը, 2007. - էջ 493, **Օանձօւ Է.Է.** Նի անձակագործության մեջ՝ օրենսդրական տեխնիկայի կանոնների համապատասխան պահպանական աշխատանքը, 2008. - էջ 266 և այլն:

վաստեղծագործական) տեխնիկա, բ) իրավակիրառ (իրավաիրացնող) տեխնիկա, գ) մեկնաբանական տեխնիկա¹:

Ըստ Ռ.Տ. Մոլիանի օրենսդրական (իրավաստեղծագործական) տեխնիկան կանոնների, միջոցների և հնարքների ամբողջություն է: Այդ կանոնների կիրառման նպատակն է օրենսդրությունն այնպիսի հայտնի կատարելության հասցնելը, որի դեպքում բացակայում են իրավաբանական ձևակերպությունները, երկիմաստությունները, նորմատիվ իրավական ակտերի հակասությունները²:

Որոշ հեղինակներ որպես դասակարգման հիմք կիրառում են այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են իրավական ակտերի տեսակները: Նրանց կարծիքով իրավաբանական տեխնիկան բաժանվում է երկու տեսակի՝ օրենսդրական (իրավաստեղծագործական) և անհատական ակտերի տեխնիկա³: Սակայն այս դասակարգումը թեկուզն տրամաբանութեն անթերի է, այնուամենայնիվ չափազանց ընդհանուր է, որպեսզի ընդունվի անվերապահորեն, քանի որ անհատական ակտերը կարող են լինել իրավաիրացնող և իրավակիրառ: Բացի այդ, կան նաև մեկնաբանական և այլ իրավական ակտեր: Հետևաբար իրավաբանական տեխնիկայի տեսակներն անպայման պահանջում են լրացումներ:

Վ.Ն. Կարտաշովի կարծիքով՝ իրավաբանական տեխնիկան բաժանվում է հետևյալ տեսակների՝ իրավաստեղծագործական, իրավակիրառական (իրավաիրացման), մեկնաբանական, իրավահամակարգույացման, դատական, քննչական, դատախազական և այլ⁴:

Հենց օրենսդրական տեխնիկայից սկսեց իրավաբանական տեխնիկայի հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որը, իհարկե, պատահական չէ: Ոչ բավարար մտածված և վատ ձևակերպված նորմատիվ ակտերի արդյունքում ծագող ծախսերն այնքան մեծ են լինում, որ ոչ մի համեմատության մեջ չեն դրվում անհատական ակտերի ընդունման ժամանակ իրավաբանական տեխնիկայի կանոնների խախտումից պատճառված վնասի հետ:

¹ Տե՛ս **I օճառակ Թ.Օ.** Օանձե՞ց ձի՞ոձաձնո՞ձա է յօձաձա. - 2-ա էջա, յաձաձա. է ամի. - I . : ԲԻ ԷօԵ-ԱԱ Ա, 2005. - էջ 370:

² Տե՛ս Նոյն տեղում:

³ Տե՛ս **Աճառնակ Ն.Ն.** Ի անձ օանձե՞ց յօձաձա Օ. 2. - I . : Բ ծեա. էջո, 1982. էջ 272:

⁴ Տե՛ս **Էճճաթժ Ա.Ի.** Բ ծեա+անձա օձաձ էջա, օձաձէջա, յօձաձաձ օձաձ էջա: Ե օձաձ ս յօձաձ+անձ օձաձ էջա: Ա 2-օ ծ. / Ի 1 աճաձ Ա.Ի . Աճճաձ աճաձ. - Օ. 1, Ի . Ի 1 աճաձ 2001, էջ 18:

Պետական և հասարակական կյանքի իրավական ոլորտը լի է շատ երևույթներով ու գործընթացներով: Նրանում գործում են բազմաթիվ իրավաբանական անձինք և քաղաքացիներ: Իշխանությունների ջանքներն ուղղված են առավելապես օրենքների ընդունմանը և օրինականության պահպանմանը: Իրավական իրադարձությունների հորձանուտում քիչ նկատված է մնում իրավաստեղծագործության այնպիսի տարր, ինչպիսին օրենսդրական տեխնիկան է: Շատերին այդ գործունեությունը թվում է լիովին հասանելի և ոչ բարդ: Սակայն պարզվում է, որ այնպիսի «ոսկե բանալին», ինչպիսին օրենսդրական տեխնիկան է, իգոր մնացել է «իրավական կյանքի ընդերքում», այն դեպքում, եթե դրա կիրառումն ազատում է սխալներից և նպաստում օրենքների որակի բարձրացմանը¹: Տվյալ հաճամանքը վարուց է նկատվել իրավաբան-գիտնականների կողմից, բայց օրենսդրական տեխնիկայի նկատմամբ նրանց հետաքրքրությունը ոչ միշտ է հարկադրել, որպեսզի իրավաբանական պրակտիկան ճանաչի իրավական այս գործիքի դերը²:

Վ.Մ. Դուեկն առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի երկու տեսակ՝ իրավաստեղծագործական և իրավակիրառական: Նրա կարծիքով, իրավակիրառական տեխնիկան անհատական իրավակիրառ ակտերի պատրաստման ու ձևակերպման հնարքների և կանոնների ամբողջություն է³: Իրավաբանական տեխնիկայի հիմնախնդրին անդրադարձած մեկ այլ հեղինակ՝ Դ.Ն. Լիզլովը, իրավաբանական տեխնիկան բաժնում է հետևյալ տեսակների՝ ա) օրենսդրական տեխնիկա, բ) իրավակիրառական տեխնիկա, գ) բացատրական տեխնիկա, դ) իրավաիրացնող տեխնիկա⁴:

Մեր կարծիքով, հիմնախնդրին առավել ճիշտ մոտեցում է ցուցաբերում S.Վ. Կաշամինան: Նա առաջարկում է որպես դասակարգման հիմնական չափանիշ ընտրել իրավական կարգավորման փուլերը: Հիմնա-

¹ Տե՛ս **Օեօն էօ՛ր Բ.Ա.** Չաե՛ն նաև անձինք այլ օաօն էօ՛ր է յեալ աի օն / Ա էի.: Չաե՛ն նաև անձինք այլ օաօն էօ՛ր / Ի նաև օաօն. Բ.Ա. Օեօն էօ՛ր անձինք ամբողջություն . Տ., 2000, էջ 5:

² Տե՛ս Նոյյն տեղում:

³ Տե՛ս **Աօյշի Ա.Ի.** Բ ծեաէ-անէէա անէօն աի օն է թօնէաէ-անէայ օաօն էօ՛ր է յեալ աի օն / Ա էի.: Ի ծի անէօն նաև օաօն է անէօն անէա է յեալ անէա օաօն էօ՛ր է յեալ անէա է յեալ անէա . Նոյն է յեալ անէա . Տ., 2008. - էջ 386:

⁴ Տե՛ս **Էնցէր Ա.Ի., Էնծօնօնէ Ա.Բ.** Բ ծեաէ-անէէա օաօն էօ՛ր է յեալ անէա է յեալ անէա . Տ., 2008-89, 2008. - էջ 7:

կան փուլերը երեքն են՝ ա) իրավաստեղծագործություն, բ) իրավունքի գործողություն, գ) իրավունքի կենսագործում¹:

Բնականարար, գործնականում դրանցից յուրաքանչյուրում իրականացվում են իրավաբանական գործողություններ, և, որպես կանոն, կազմվում են իրավական փաստաթղթեր: Սակայն երբեմն իրավական կարգավորման հիմնական փուլերն «աճում են» կամ լրացվում են օժանդակ կամ լրացնոցից փուլերով, երբ հարկ է լինում կատարել նաև այլ իրավաբանական գործողություններ: Օրինակ՝ եթե իրապարակվել է նորմատիվ ակտ, ամպայման պետք է հոգ տանել այն տպագրելու նախն, ընդ որում, դա պետք է անել ոչ թե այն ժամանակ, երբ կցանկանաս, այլ պահպանելով իրապարակման և այլ կանոնների սահմանային ժամկետները: Կամ, երբ օրենսդրական ակտի ստեղծման գործընթացում պետք է կատարվի (կամ մինչև, կամ հետո) աշխատանք նորմատիվ ակտերի հաշվառման և համակարգման ուղղությամբ: Հակառակ դեպքում իրավաստեղծ աշխատանքը կարող է լինել անարդյունավետ: Կամ նախքան իրավական հարաբերությունը հաստատելը հարկ է կատարել իրավունքի նորմի մեջնաբանություն: Կամ նախքան որևէ իրավահարաբերության մեջ մտնելն անհրաժեշտ է կանոնակարգել իրավական կարգավիճակը (օրինակ՝ ձեռք բերել քաղաքացիություն)²:

Վերջապես, երբ խախտվում է իրավական նորմերի իրացման նորմալ ընթացքը և ծագում է վեճ, կամ խախտվում է որևէ մեկի իրավունքները, հարկ է լինում գործողության մեջ դնել պետության հարկադրական մեխանիզմը: Իրականացնելով իրավակիրառում՝ պետական մարմինները կարգավորում են իրավական իրավիճակը: Բնականարար, նրանց գործունեությունը, լրջորեն շոշափելով իրավախախտ սուբյեկտների իրավունքները, պետք է ընթանա սահմանված կանոնների պահպանմամբ և պետք է լինի վերահսկելի³:

Այսպիսով, առանձնանում է իրավաբանական տեխնիկայի վեց տեսակ⁴. 1) օրենսդրական տեխնիկա, 2) նորմատիվ ակտերի իրապարակման տեխնիկա, 3) նորմատիվ ակտերի համակարգման տեխնիկա, 4)

¹Տե՛ս **Էճօթէթա Ծ.Ա.** Բ ծեած-ձնեայ ծաօն էեա ա նօածա ։ ձնօն ի ա ։ օ-աա: օ-աա. ի նմ աեա. - լ .: լ ի ծ ա, 2009. - էջ 31:

²Տե՛ս Նույն տեղում:

³Տե՛ս Նույն տեղում:

⁴Տե՛ս Նույն տեղում:

մեկնաբանման տեխնիկա, 5) իրավափրականացման տեխնիկա, 6) իրավակիրառական տեխնիկա:

Օրենսդրական տեխնիկայի ուսումնաքի հիմնադիր կարելի է համարել Ռ. Հերինգին: Դեռևս հարյուր տարի առաջ նա այդ հիմնախնդրին նվիրեց ինքնուրույն ուսումնասիրություն՝ անվանելով այն «Իրավաբանական տեխնիկա»¹: Սակայն, այնուամենայնիվ, այդ գրքում խոսվում էր միայն օրենքների ստեղծման կանոնների մասին: Այդ աշխատության մեջ Ռ. Հերինգը ձևակերպել է մի շարք կանոններ այն մասին, թե ինչպես գրել օրենքներ: Այդ կանոնները նա բաժանել է երկու խմբի՝ օրենքների քանակական պարզեցման կանոններ և օրենքների որակական պարզեցման կանոններ:

Օրենսդրական տեխնիկայի հասկացության հարցում գիտնականների մոտ նկատվում է որոշակի բազմազանություն: Հեղինակ-իրավաբանների կողմից մշակվել են մի շարք, իրարից այս կամ այն չափով տարրերվող «օրենսդրական տեխնիկա» հասկացության բնորոշումներ: Սակայն այդ բոլորը վերջին հաշվով հանգում է նրան, որ տվյալ հասկացության համար որպես սահմանման հիմք վերցվում են օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման կանոնները (և կամ) հնարքները²:

Օրենսդրական տեխնիկայի տակ, օրինակ, որոշ աղբյուրներում հասկացվում է «ըստ ձևի և կառուցվածքի նորմատիվ ակտերի նախագծերի առավել կատարյալ նախապատրաստման կանոնների և հնարքների համակարգ, որն ապահովում է նորմատիվ կարգադրությունների ձևի առավելագույն ամբողջովին և ճշգրիտ համապատասխանությունը դրանց բովանդակությանը, նորմատիվ նյութի հասանելիությունը, մատչելիությունը և տեսանելիությունը, կարգավորվող հարցերի սպառիչ ընդգրկումը³:

Դ.Ա. Քերիմովը տալիս է օրենսդրական տեխնիկայի հետևյալ հասկացությունը. դա օրենքները (նաև ենթաօրենսդրական ակտերը) իրենց

¹Տե՛ս **Էճելս Ջ.** Բ ծանոթագրական գաղափարներում օածի եռական համակացության համար. - ՆՅ Ա., 1906:

²Տե՛ս **Ի ձեռքեւության պատճենահանձնության մասին օրենք**. Ըստ այս օրենքի օրենքների գործությունը համարակալվում է կատարյալ նորմատիվ կարգադրությունների ձևությամբ: Այսօր այս օրենքը առաջ է հանդիսացել համարակալված օրենքություն: Այսօր այս օրենքը համարակալված օրենքություն:

³Տե՛ս **Ի ձեռքեւության պատճենահանձնության մասին օրենք**. Ըստ այս օրենքի օրենքների գործությունը համարակալվում է կատարյալ նորմատիվ կարգադրությունների ձևությամբ: Այսօր այս օրենքը առաջ է հանդիսացել համարակալված օրենքություն: Այսօր այս օրենքը համարակալված օրենքություն: Այսօր այս օրենքը համարակալված օրենքություն: Այսօր այս օրենքը համարակալված օրենքություն:

Էռության և բովանդակության համապատասխանությամբ առավել ռացիոնալ կազմելու և տրամաբանորեն հետևողական ձևակերպելու կանոնների և հնարքների համակարգ է¹:

Ըստ Վլադիմիր Նազարյանի՝ օրենսդրական տեխնիկան օրենքների և այլ նորմատիվ ակտերի՝ իրենց ձևով և կառուցվածքով առավել կատարյալ նախագծերի մշակման իրավաստեղծ գործունեությունը քննութագրող, տեսականորեն իմաստավորված և հիմնավորված կանոնների՝ եղանակների, մեթոդների ու հնարքների համակարգ է, որն ապահովում է նորմատիվ ակտերի դրույթների շարադրանքի լիակատար և ճշգրիտ համապատասխանությունը դրանց բովանդակությանը, կարգավորվող ոլորտի սպառիչ ընդգրկումը նորմատիվ ակտում, իրավական նյութերի պարզությունն ու մատչելիությունը²:

Նկատելի է, որ օրենսդրական տեխնիկան ավանդաբար քննարկվել է իրավաստեղծագործության համատեքստում՝ որպես նրա տարրերից մեկը: Դա նորմատիվ ակտերի նախագծերի ըստ ձևի և կառուցվածքի առավել կատարյալ նախապատրաստման կանոնների և հնարքների համակարգ է, որն ապահովում է նորմատիվ կարգադրությունների առավել լրիվ և ճշգրիտ համապատասխանությունը դրանց բովանդակությանը, կարգավորվող հարցերի ընդգրկումը սպառող նորմատիվ նյութի հասանելիությունը, մատչելիությունը և տեսանելիությունը: Դրանց են վերաբերում այն պահանջները, որոնք ներկայացվում են ակտերի ձևին, ավելի փառ ընդունված ակտերի փոփոխմանը և վերացմանը, հակասությունների վերացմանը, հոդվածների նոր խմբագրությամբ ձևակերպմանը և այլն, ինչպես նաև ձևական ռեկվիզիտները, կառուցվածքային մասնատումը, հասուկ լեզուն, տերմինների սահմանումը, նորմների ապահովման հասուկ միջոցները³:

Այսպիսով, նորմատիվ ակտերի ընդունման և վերացման, նրանցում փոփոխություններ մտցնելու գործընթացն ընթանում է անընդհատ, քանի որ անհրաժեշտ է օրենսդրության կատարելագործում հասարակական հարաբերություններն առավել համապատասխան կարգավորելու նպատակով: Այս գործությունը մեջ հարկավոր է պահպանել որոշակի կա-

¹ Տե՛ս **Էնծեն Բանական Ա. Էնօւնուններ և նշանակություններ**. - Երևան, 1991, էջ 11-15:

² Տե՛ս **Վլադիմիր Նազարյան** Օրենսդրական տեխնիկայի տարրական կանոնները, Երևան, 1999թ., էջ 10:

³ Տե՛ս **Չառի Աննա Ա. Հայութ** Առաջնային պահպան և ապահովության մասին օրենքը, 2000, էջ 6:

նոններ, որոնք ստացել են «օրենսդրական տեխնիկա» անվանումը: Օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանումից մեծամասամբ կախված է օրենսդրության կատարելության աստիճանը, նորմատիվ ակտերի մատչելիությունը, օրենսդրության հաշվառման և համակարգման բարձր մակարդակը¹:

Կատարված ուսումնասիրությունից եմելով՝ պետք է նշել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլուխը վերնագրված է «Օրենսդրական տեխնիկայի կանոններ», որում նախատեսված են ընդհանուրապես իրավական ակտերի՝ և նորմատիվ (իր բոլոր տեսակներով), և անհատական, շարադրման ու կառուցվածքի իրավատեխնիկական կանոնները: Այդ գլխի կարգավորման առարկան և կանոնների բովանդակությունը հաստատում են, որ խոպք վերաբերում է ոչ միայն օրենքների կամ նույնիսկ օրենսդրության ստեղծման տեխնիկային, այլ նաև անհատական իրավական ակտերի ստեղծմանը: Ընդ որում, դրանցում կան կանոններ, որոնք իրենց բովանդակությամբ մեկնաբանական տեխնիկայի մասն են կազմում: Վերը նշված հանգամանքները նկատի ունենալով՝ կարիք կա փոխել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի վերտառությունը՝ անվանելով այն «Իրավաբանական տեխնիկայի կանոններ»:

¹Տե՛ս *I ēātēēēt A.Ñ.* Ҫաēī ī āālōāēū āy ȏāōī ēēà / ȴ ȶí.. ȴ ȶíāēā ī īānāé ȏāī ȶèè ī ȶāāā ȶ āī ȏōāāȶōāā: ȶ÷āāī ēē ȶēy ȶōc̄ā / ȴ ȶā īān. ȶāā. ȭȶÍ , ȶ.ȶ.ȶ., ȭȶÍ ȴ. ȴ.Ñ. ȴ ȶđñāñý ȶöà. - ȴ .: ȴ ȶđì à, 2004. - ȶ 322, ȶāī ȶđèy ȶī ȏōāāȶōāā ȶ ī ȶāāā: ȶ÷āāī ēē / ȴ ȶā ȶāā. ȴ.Ñ. ȴ ȶāī ȶēēē à, ȴ.ȴ. ȴ ȶđđèāāà. 2-à ȶćä., ȴ .. - 2008. - ȶ 551-552, ȶāī ȶđèy ȶī ȏōāāȶōāā ȶ ī ȶāāā: ȶ÷āāī ēē / ȴ ȶā ȶāā. ȴ.Ñ. ȴ ȶāī ȶēēē à. - ȴ .: ȴ ȶđåé-ȴçäà, 2006. - ȶ 435:

Sergey Kocharyan
Chair of Theory and History of State and Law, YSU
Candidate of Legal Sciences, Docent

INTERRELATION OF LEGAL TECHNIQUE AND LEGISLATIVE TECHNIQUE

Legislative technique is considered to be one of the types of Legal technique. The adoption and elimination of normative acts and the process of making changes therein is constant, as the improvement of legislation is necessary for appropriate regulation of public relations. Certain rules should be maintained in this activity, which are called “The Rules of Legislative Technique”.

The fifth chapter of the law of RA on “Legal Acts” is titled “The Rules of Legislative Technique” which comprises legislative technical rules on making legislative acts. The subject and the content of that chapter confirm that the matter is not only about the technique of creating laws or even legislation, but also about the technique of creating individual acts. Taking into consideration this circumstances it is necessary to rename the fifth chapter of the law of RA on “Legal Acts” and call it “The Rules of Legal Technique”.